

Քեզ յաւիտենական սիրով
սիրեցի : Երեւ. ԼԱ. 3
Ինչպէս որ մայր մը իր որդին
կը մխիթարէ, աշխատեալ եւ
ձեռքով իմանալով : Եւ. ԿԶ 13
Քու. Աստուածը դիմաւոր-
րելու պատրաստուէ, ո՛վ իս-
րայէլ. Ամով. Գ. 12

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ես եմ համբան ու. հշմար-
տութիւնը եւ կեանքը. Յովթ.
ԺԳ. 6
Որդին Մարդոյ եկաւ որ-
պէս զի կորսուածը վնասուէ
ու փրկէ. Դու. ԺԺ. 10
Ես եկայ որ կեանք ունե-
նան, եւ այ աւելի ունենան :
Յովթ. Ժ. 10

"PANPÈRE" REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան. — յըստս եւ Սուրիա 5 յը. Պալքանեան երկիրներ 1 շիւ. ուրիշ երկիրներ 1,50 շիւ
Rédacteur H. N. Ghazarossian, 29, Rue Fauchier — Marseille (France)

Թիի 12

Բ. ՏՍՐԻ

ՄԱՐՏ 1927

ՀԱՒԱՏՔԸ ՈՐ ՍԵՐՈՎ Ի ԳՈՐԾ ԿԸ ԴՐՈՒԻ

(Վեր.) Ե. Քատանի

Վանդի Քրիստոս Յիսուսի քով
ո՛չ Թլփատութիւնը. բանի մը կարող
է, ո՛չ ալ անթլփատութիւնը, հասկա
հաստքը, որ սիրով ի գործ կը դր-
ուի : Գաղ. Ե. 6 :

Պօղոս առաքեալին օրով կային կարգ մը
քրիստոնէաներ, յատկապէս հրէութիւնէ դար-
ձածներ, որոնք թլփատութեան եւ անոր յարա-
կից ծէսերու եւ արարողութիւններու չափազանց
կարեւորութիւն կուտային : Առաքեալը շատ
զժուարթութիւն ունեցաւ այսպիսի մարդոց հետ :
Հիմա ալ կան շատ մը քրիստոնէայ անհատներ
ու եկեղեցիներ որ չափազանց կարեւորութիւն
կ'ընծայեն ծէսերու եւ արարողութիւններու եւ
կը կարծին թէ փրկութիւնը ասոնցմով կ'ապա-
հովուի : Արդարեւ ծէսերն ու արարողութիւններն
ալ տեղ ունին կրօնքի մէջ, բայց անոնց կարե-
ւորութիւնը յոյժ երկրորդական է, որովհետեւ
անոնք կրօնքին կեղեւը միայն կը կազմեն :
Կրօնքը ներքին հոգեւոր կեանք մըն է : Ծէսերն
ու արարողութիւնները այնչափ միայն օգտակար
են՝ որչափ կը պահպանեն ու կը սնուցանեն այս
ներքին հոգեւոր կեանքը. բայց այդ վայրկեանին
որ կ'արգիլեն ու կը խեղդեն ներքին հոգեւոր
կեանքին աճումը, վնասակար կը դառնան, եւ
աւելի լաւ է անոնցմէ հրաժարիլ :

«Թլփատութիւնը բան մը չէ, ու անթլփա-
տութիւնը բան մը չէ». առաքեալը երեք տեղ
կը կրկնէ այս խօսքը : (ա) Ա. Կորնթ. Է. 19ին
մէջ, ուր գայն կը հակադրէ «Աստուծոյ պատուի-
րանքներուն պահպանութեանը» հետ : (բ) Մեր
բնաբանին մէջ, ուր անիկա հակադրուած է «Սի-

րով ի գործ դրուող հաւատք»ին հետ : (գ) Գաղ.
Զ. 15ին մէջ, ուր անոր հակադրուած գաղափարն
է «Նոր ստեղծուած» ըլլալը : Բայց այս երեքը
երեք զոտ եւ տարբեր բաներ չեն, հապա միեւ-
նոյն հոգեւոր կեանքին նկարագրութիւնը երեք
տարբեր տեսակէտներէ : Հոգեւոր կեանքը՝ իր
Ազրիւրին, Աստուծոյ վերաբերմամբ՝ հնազան-
դութիւն է. «Աստուծոյ պատուիրանքներուն պահ-
պանութիւնը». անիկա մեր նմաններուն վերա-
բերմամբ՝ ծառայութիւն է. «Հաւատքը որ Սիրով
ի գործ կը դրուի». իսկ մեր անձին վերաբեր-
մամբ՝ նորոգութիւն է. «Նոր ստեղծուած ըլլալը» :
Յիսուս Քրիստոսի անձնատուր եղողին մէջ այս
երեք բաները միասին կը կատարուին : (ա) Անի-
կա կը նորոգուի, նոր արարած կ'ըլլայ, հին
բնաւորութենէն եւ ունակութիւններէն կ'ազա-
տի, մեղքի կեանքէն կը հրաժարի, իր անձնա-
պաշտութենէն ու եսամբ ութենէն կը փրկուի :
(բ) Հին, անհնազանդ ու աղստամբ բնութենէն
ազատուելով, կը կարողանայ Աստուծոյ հնա-
զանդելու, եւ Անոր պատուիրանքները պահե-
լուն մէջ հաճոյք գտնելու : (գ) Սիրոյ բնութիւնը
ստացած ըլլալով Աստուծոյ, անկէ զրդուած՝ կը
սիրէ մարդիկը եւ իր նմաններուն օգտին համար
կ'աշխատի, կը ծառայէ : Եւ պէտք է լաւ դիտել
որ այս երեքը միասին այս ատեն միայն կարե-
ւի է երբ մարդ «Յիսուս Քրիստոսի մէջ» ըլլայ.
Անկէ դուրս այս բաները անկարելի են մարդուն
համար :

«Հաւատքը որ սիրով ի գործ կը դրուի». այս
կարճ բացատրութեան մէջ կը բովանդակուի
հոգեւոր կեանքին ծագումը, որ է հաւատքը, եւ
արտայայտութիւնը, որ է սէրը :

Մենք բոլորս հաւանութիւն կուտանք Պօղոս առաքեալի վարդապետութեանը թէ հոգեւոր կեանքի հիմնաքարը հաւատքն է. «Արդարը հաւատքէն պիտի ապրի»: Բայց առաքեալը հաւատքը ըսելով՝ միայն մտքին համազումը չի հասկնար: Եթէ դուն հաւատոյ հանգանակ ըսուած զրութիւնը բառ առ բառ դոց ընես ու արտասանես, եւ անոր պարունակած ամէն նախադասութեան համար ալ ըսես «Այո», այս ըսուածը ուղիղ է, ես ասոր կը հաւատամ իբրեւ ճշմարտութիւն, մէկ բառին դէմ իսկ առարկութիւն չունիմ», ասիկա բուն հաւատքը չէ եւ տակաւին օգուտ չունի: Առաքեալին ըսած հաւատքը՝ Խոսիին Քրիստոսի հետ միանալն է, այնպէս որ մարդ կարենայ ըսել, «Ալ կենդանի եմ չէ թէ ես՝ հապա Քրիստոս կ'ապրի իմ մէջ» (Գաղ. Բ. 20): Հաւատքը՝ հոգիին Քրիստոսէ սնանելով ապրելուն միջոցն է: Նորածին երախայ մը բան չի գիտի, միայն կ'զգայ որ տաք կուրծք մը կայ, անուշիկ գիրկ մը կայ, երբ այդ զրկին մէջ առնուի ու կուրծքին վակչի, թէ՛ կը տաքնայ, թէ՛ կը կշտանայ, հոն իր ցաւերը կը փարատին, ինքզինք հանգիստ ու երջանիկ կըզգայ: Ուստի իր կարօտն է այդ կուրծքին փակչի: Թէեւ ինք տակաւին անկարող է գաղտնիքը հասկնալու, սակայն իրողութիւնն ալ այն է որ եթէ այդ կուրծքէն չծծէ ու չսնանի, չի կրնար ապրիլ, կը մեռնի. ուստի բնագոյով զայն կը փնտռէ, երբ անկէ զրկուի՝ կուլայ, անհանգիստ կ'ըլլայ: Առաքելական վարդապետութիւնը կ'ըսէ որ հոգիիդ եւ Քրիստոսի յարաբերութիւնն ալ այսպէս է. «Նորածին մանկանց պէս բանական ու անխարդախ կաթին փափաքեցէք, որ անով մեծնաք, թէ որ Տէրոջը քաղցը ըլլալուն համը առիք» (Ա. Պետ. Բ. 2, 3): Դուն ինքզինքդ հոգեւորապէս ապրեցնելու կարողութենէն զուրկ ես, միայն Քրիստոսէ առնելով կրնաս ապրիլ ու կենդանի մնալ: «Արդարը հաւատքէն կ'ապրի»: «Աստուծոյ Որդւոյն հաւատքովը կ'ապրիմ» (Գաղ. Բ. 20) Քրիստոսէն շարունակ նոր կեանք եւ սնունդ ստանալով: Քրիստոս յայտնութիւնն է Աստուծոյ, որով երբ Քրիստոսէն սնանիս, Աստուծոյ մէջ կ'ըլլաս: Ան որ Աստուծոյ կը սնանի, բնութեամբ Աստուծոյ նման կ'ըլլայ, ինչպէս որ ամէն մարդ իր մօրը բնութիւնը կ'ստանայ, որ զինք զիեցուցած է: Աստուծոյ բնութիւնը նախ նոր է միշտ, բնաւ հիննալ չկայ Անոր մէջ: Երբ դուն ալ Աստուծոյ մէջնաս, քու մէջդ ալ մշտական նորութիւն մը կ'ըլլայ: Որչափ ատեն որ մեր մարմինը նորութիւն, մենք մարմնաւոր կեանքով կ'աճինք ու կը մեծնանք. այն վայրկեանին որ մարմինը նորութիւն չէ զադրի, ծերանալ ու հիննալ կ'սկսի, եւ ծերանալուն ու հիննալուն վախճանն է մահ եւ քայքայում:

Ասիկա անխուսափելի է: Նմանապէս մտաւոր կեանքն ալ միմիայն շարունակական նորութիւնամբ կը պահպանուի: Հոգեւոր կեանքի համար ալ ճիշդ այսպէս է. այն վայրկեանին որ հոգեւորապէս նորութիւն չէ կը դադրիս, հիննալ կըսկսիս, եւ հոգեւորապէս հիննալուն վախճանն է հոգեւոր մահ: Աստուծոյ մէջնալ, հոգեւորապէս կե'ր ու խմէ՝ Քրիստոսէն, թող անոր Հոգին ու խօսքը քու սնունդդ ըլլայ, եւ հոգիդ մշտապէս կեանք պիտի վայելէ: Այս օրդ երէկուրէն աւելի սուրբ, եւ վաղուան օրդ ալ այսօրուրէն աւելի սուրբ պիտի ըլլայ, միշտ գէպի լաւագոյնն ու բարձրագոյնը, շարունակ աւելցող ու մեծցող կեանք մը: Աստուծոյ բնութիւնը, երկրորդ, սէր է. բնաւ անձնապաշտութիւն չկայ Անոր մէջ: Անիկա տիեզերքը ստեղծեց, որպէսզի իր սէրը արտայայտէ, այսինքն ունենայ արարածներ քեզի եւ ինծի պէս՝ բանականութեամբ ու կամքով օժտուած, զորոնք կարենայ սիրել, խնամել, եւ փոխադարձաբար զինքը սիրելու կարող ընել: Աստուծոյ կ'ախորժի իր արարածներուն ծառայել: Երբ մենք մարդիկս Աստուծոյ մոլորեցանք ու զատուեցանք եւ ինքզինքնիս մեղքի ու մահուան յանձնեցինք, Աստուծոյ չղաղրեցաւ մեզ սիրելէ, այլ ատիկա գործածեց իբրեւ առիթ մը իր սէրն ալ աւելի արտայայտելու: «Այնպէս սիրեց Աստուծոյ աշխարհը...», այսինքն քեզ եւ զիս, եւ դեռ կը սիրէ: Քրիստոս՝ Աստուծոյ սէրը յայտնեց քեզի խաչին վրայ քու տեղդ մեռնելովը, եւ այդ սէրը կատարելապէս յայտնեց, պակաս կէտ մը չթողուց: Աստուծոյ կ'ուզէ որ դուն ալ նոյն սիրոյ բնութիւնը սորվիս իրմէն. ասոր կերպը Յիսուսի յանձնուին է: Երբ ինքզինքդ Յիսուսի յանձնես, քեզի բնաւ դժուար պիտի չզայ Աստուծոյ պատուիրաններուն պահպանութիւնը, որովհետեւ, նախ, մարդուն դժուար չիգար սիրող հօր մը հնազանդիլը: Ինչ չ'ով պիտի արտայայտենք մեր Հօրը հանգէպ մեր շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը, չէ՞ որ փոխադարձաբար զինք սիրելով, իր կամքին համաձայն ապրելով եւ իր հաւնած ու ախորժած բաներն ընելով. մանաւանդ որ, ինչպէս Յովհաննէս առաքեալը կ'ըսէ. «Աստուծոյ պատուիրանները ծանր բաներ չեն» (Ա. Յովհ. Ե. 3): Երկրորդ, Յիսուս քեզի պիտի հաղորդէ իր Խնայմունքեան ոգին: Յիսուս Որդի է, եւ որդիութեան յատկութիւնն է հնազանդիլ իր հօրը: Յիսուս իր այս հնազանդութիւնը լիովին ապացուցուց խաչին վրայ: Աստուծոյ Հայրն ալ այնչափ հաճեցաւ Անոր այս որդիական հնազանդութենէն որ զԱնի մեռնելէն յարուցեց եւ երկինքը բարձրացնելով իր աջ կողմը նստեցուց, եւ Անոր սիրոյն՝ ներեց մեզի ապստամբներու: Դուն որ խաչին վրայ Յիսուսի թափած արիւնո-

վը մեղքերուդ թողութիւն ստացած եւ փրկութիւն գտած ըլլալդ կը խոստովանիս, հարկաւ պէտք է որ այդ խաչին վրայ ապացուցուած տեսակէն հնազանդութիւն մը ցուցնես, եթէ ոչ քու խոստովանութիւնդ սուտ եւ խաբէական կ'ըլլայ: Բայց թէ որ ինքզինքդ չես խաբեր եւ իրապէս խաչին առջեւ եկեր եւ այդ արիւնով լուացուեր ես, անպատճառ այդ արիւնին մէջ եղող հնազանդ բնութիւնն ալ քեզի փոխանցուած պիտի ըլլայ: Երբորդ, Յիսուս քեզի Սուրբ Հոգին պիտի զրկէ եւ Ս. Հոգին քեզ պիտի կարողացնէ Աստուծոյ սուրբ խօսքը գիտնալու, ընտրելու եւ կատարելու: Եթէ քու հաւատքդ ճշմարիտ եւ կենդանի հաւատք է, այս բաները ինքնին յառաջ պիտի գան:

Հաւատքը այսպէս պիտի ունենայ նաեւ իր արտայայտութիւնը կամ գործադրութիւնը: Յակոբոս առաքեալ կ'ըսէ որ «Հաւատքը առանց գործքի մեռած է»: Ոմանք կարծեր են թէ հակասութիւն կայ Յակոբոսի եւ Պօղոսի վարդապետութեանց միջեւ. բայց այդպէս չէ: Ահա Պօղոս ալ մեր բնաբանին մէջ կը շեշտէ որ պէտք եղած միակ բանը «Սիրով ի գործ դրուող հաւատքն» է: Եւ արդէն այսպէս է բանը: Մարդու մը ոչ թէ մեռած, այլ կենդանի ըլլալը ինչէն յայտնի է. չէ՞ որ իր շարժելն, գործելն: Մեռելները քան մը ընելու կարող չեն: Այն որ կենդանի եւ արթուն է, կը շարժի եւ կը գործէ: Գործքերը հոգեւոր կեանքի պտուղներն են, եւ ոչ թէ արմատը. բայց նաեւ ապացոյցն են ծառին կենդանի ըլլալուն: Զմեռ աստեղ գուցէ չկըրնաս գիտնալ թէ տերեւաթափ ծառը արդեօք կենդանի է թէ մեռած: Բայց սպասէ քիչ մը. եթէ ծառը տերեւներ ու ծաղիկներ կը բանայ գարնան մէջ եւ պտուղներ կը հասունցնէ ամբարն կամ աշնան, ա'լ տարակոյս չես ունենար որ ծառը կենդանի է: Դուն կենդանի՞ ես. ասոր ապացոյցը պտուղ արտադրելը պիտի ըլլայ: Ամէն հոգի որ հաւատքով հաստատուած է Քրիստոսի վրայ, որթին վրայ հաստատուած կենդանի ճիւղի մը պէս պտուղ կուտայ: Քրիստոս քեզ փրկեց որ առատ պտուղ տաս, պտուղդ մնալուն ըլլայ եւ Աստուած փառաւորութիւն անով: Պօղոս առաքեալ առ Եփեսացիս թուղթին երկրորդ գլխուն մէջ սա խօսքերով կ'աւարտէ այդ նշանաւոր հատուածն, ուր ամենէն աւելի կը շեշտէ մեծ ճշմարտութիւնը թէ փրկութիւնը շնորհքն է եւ ոչ թէ գործերէն. «Ոչ թէ գործերէն, որ չըլլայ թէ մէկը պարծենայ» ըսելէ անմիջապէս ետքը կը յարէ, «Վասնզի մենք անոր ձեռագործն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած» բարի գործերու համար, որոնց Աստուած առաջուրնէ պատրաստեց մեզ, որպէսզի անոնց մէջ քալենք»: (Եփես. Բ. 9, 10): Ըսել կ'ուզէ որ

Աստուած բարի գործերու հրահանգում մը պատրաստած է առաջուց, իր կեանքի ծրագրին մէջ որու համեմատ պիտի քալէ ամէն փրկուած անհատ: Փրկութեան նպատակն այն է որ մենք «Աստուծոյ գործերը» գործենք. (Յովհ. 2. 28):

Մեր հաւատքը բերանով կամ գրչով դաւաւնիլ եւ վկայել պէտք է եւ օգտակար: Քանզի, նախ, դաւանիլ եւ վկայել կը զօրացնէ մեր հաւատքը, կ'աւելցնէ մեր հոգեւոր քաջութիւնը, աւելի պայծառ կ'ընէ մեր ըմբռնումը ճշմարտութեան մասին, եւ կը խորացնէ մեր համագումները: Ուստի մեր դաւանիլն ու վկայելը ամենէն առաջ մեր անձնական կեանքին համար օգտակար է: Այն որ չի դաւանիր ու վկայեր, անոր հաւատքը միշտ երերուն կը մնայ, հոգեւոր վըտահոլութիւնը պակաս, ըմբռնումներն անորոշ եւ տարակոյսներով լի, իսկ համագումներն՝ անհաստատ ու փոփոխական: Երկրորդ, մեր դաւանիլն ու վկայելը օգտակար է ուրիշներուն համար, մեղաւորները կ'առաջնորդէ Քրիստոսի փրկութեան իսկ արդէն Յիսուսի եկածները աւելի կը քաջալերէ ու կը հաստատէ: Երբորդ, եկեղեցիի կեանքին համար ալ պէտք է, քանզի մինչեւ որ եկեղեցին չբաղկանայ դաւանող ու վկայող, քաջ ու համարձակ, հաւատքի ու համագումն մէջ հաստատուն եւ հոգեւոր պայծառ ըմբռնումներով անդամներէ, չի կրնար աշխարհէ դատուած կեանք մը ներկայացնել: Հետեւաբար, դաւանութիւն եւ վկայութիւն ամէն կերպով հարկ եւ օգտակար են: Հրապարակային աղօթքն ալ այսպէս է. սակայն պայմանաւ որ ամէն երեքն ալ ճշմարիտ եւ անխարդախ ըլլան, շինու չըլլան, իրական փորձառութենէ բղխած անկեղծ դաւանութիւն, վկայութիւն կամ աղօթք ըլլայ: Ի՞նչ է այսպէս ըլլալուն ապացոյցը. — հաւատքին գործադրութիւնը սիրով, կեանքիդ մէջ սիրոյ եւ բարի գործերու գտնուիլը: Ամէն ոք կրնայ ասոնք տեսնել, որով երբ դուն կը խոստովանիս թէ կեանքիդ մէջ այս բարի բաները հաւատքէ կը բղխին, երբ կը վկայես թէ Յիսուս Քրիստոսի նուիրուած ըլլալովդ՝ Անկէ եկած նոր կեանքի եւ Հոգւոյն Սրբոյ շնորհիւ այս սէրը եւ այս բարի գործերը գոյացած են քու կեանքիդ մէջ, ամէն մարդ կը հաւատայ քու խոստովանութեանդ ու վկայութեանդ, եւ փառք կուտայ Փրկչին որ քեզի տուած է այս սիրոյ կեանքը եւ անձնուրացութեան գործերը. ուստի իրենք ալ կը դրդուին Ասոր գալու եւ զԱյն սիրելու: Բայց երբ չունինք այս գործադրութիւնը հաւատքի, մեր դաւանութիւնն ու վկայութիւնը սուտ կ'ըլլայ եւ աւելի վնաս կ'ընէ քան թէ օգուտ: Պէտք եղածը հաւատքն է կենդանի, որ գործադրութիւնն ալ կ'ունենայ սիրոյ ծառայութեամբ:

ԱՄԵՆԱՄԵԾ ԳԻԻՏԸ

Աստղագէտ Գալիլիոս երբ ստուգեց թէ երկիրը արեւին շուրջը կը դառնայ, մարդիկ ծագրեցին զայն եւ գաւաղանի հարուածներով սպառնացան անոր եթէ խօսքը ետ չառնէր։ Այսօր իւրաքանչիւր ուսումնական դիտէ թէ Գալիլիոս իրաւունք ունէր։

Երբ Հարմի, մեծ բժիշկը հաստատեց թէ արիւնը շրջան կ'ընէ մարմնոյն բոլոր անդամներուն մէջ եւ ետ կը դառնայ դէպի սիրտը, ծագրուեցաւ եւ ոչ մէկը ուզեց հաւատալ անոր։ Այսօր ոչ ոք կը տարակուսի այս ճշմարտութեան մասին։

Մեքենագէտ Վաթ երբ շագիի գորութիւնը գտաւ, մարդիկ զուխնին շարժեցին. եւ երբ Ստէֆէնըն վայրաշարժը հնարեց շագիի գորութիւնը օգտագործելու, խելագարի մը տեղ զբոսուեցաւ. բայց այսօր, աշուղներթաց կառախուսքը, որ մէկ քիլօմէթր միջոցը մէկ վայրկեանէն կը կտրէ, կ'ապացուցանէ թէ այս մարդը իրօք հանճար մըն էր։ Ի՞նչ պիտի ընէինք, եթէ վայրաշարժը չըլլար։

Երբ Մօրսէ ստուգեց թէ ելեքտրականութիւնը մետաղեայ թելի մը միջոցաւ կը փոխանցուի, եւ թէ տեւէ լուր քառորդ վայրկեանի մէջ Ալլանտեանը կտրելով կ'անցնի, ամբողջ աշխարհ կը կարծէր թէ անկարելի բան մըն էր անոր ըսածը. այսօր ոչ ոք կը տարակուսի։

Օթօմոպիլ, անթել հեռագիր, ընդծովեայ եւ աստնոց նման շատ մը հրաշալի գիւտեր, որոնք թէեւ սկիզբէն ծագրանքի եւ քմծիծաղի առարկայ եղան, բայց ժամանակի ընթացքին յաղթական դուրս եկան եւ բնական բաներ սեպուեցան։

Արդ, մենք պէ՛տք է զարմանանք երբ մարդիկ մեր վրայ զուխնին կը շարժեն եւ մեզ կը ծաղրեն։ Մենք գիտենք թէ կենդանի Աստուած մը կայ. գիտենք թէ Քրիստոս մեղաւորին միակ Փրկիչն է։ Ասիկա անհաւատալի կուգայ աշխարհի մարդոց, բայց անոնք ուշ թէ շուտ պէտք է հաւատան թէ ասիկա անհերքելի իրականութիւն մըն է։

Օր մը երեւելի վիրաբուժի մը հարցուեցաւ թէ իր ըրած ամենամեծ գիւտը ի՞նչ էր։ Առանց երկար մտածելու պատասխանեց նա թէ «Ես մեծ մեղաւոր մըն եմ, եւ Քրիստոս մեծ Փրկիչ մը»։

Այս էր նաեւ զարմանալի գիւտը նաւագետ Պէրլըանի, որ խուզարկութիւն մը կատարեց Կեղրոնական Ափրիկէի մէջ Զամպէզի եւ Քօնկոյի միջեւ։ Ասիկա հոն՝ այդ մութ խաւերուն մէջ գտաւ թէ ճշմարիտ Փրկիչ մը կար, եւ թէ այս Փրկիչը իր ալ Փրկիչն էր։ Անշուշտ պիտի հարցընէ մէկը թէ ի՞նչպէս եղաւ այս։

Հարուստ մարդ մը նաւագետ Պէրլըանի հրահանգ տուաւ երկրին այդ մութ մասերը լաւ մը քննելու։ Երբ անիկա Զամպէզի եւ Քօնկոյի մէջտեղը հասաւ, լսեց զարմանալի մարդու մը մասին, որուն վրայ շատ դժկատով կը խօսուէր։ Կը պատմուէր թէ յիշեալին հող գալէն առաջ այդ տեղի բնակիչները վայրենի եւ բարբարոս էին, բայց այս մարդը Աստուծոյ խօսքովը եւ անոր գորութեամբը կարող եղաւ գայլերը գառնակներու փոխել։

Այս պարագայն Հափէն աւելի հետաքրքրեց նաւագետը։ Իբրեւ ճշմարիտ գիտուն մը ուզեց խնդրոյն աւելի խորը թափանցել. ուստի զնաց այն քաղաքը, ուր կը բնակէր ծեր միսիոնարը։ Շտաթօ օրը հոն հասաւ, եւ հետեւեալ օրը երբ եկեղեցի գնաց, գտաւ թէ շէնքը թէեւ արտաքին երեւոյթ մը չունէր (պարզ հողաշէն տուն մը), սակայն ամենալաւ զարգարանքը չէր պահէր հոն։ Եկեղեցին 700 անձերէ կը բաղկանար որոնք ամէն ալ մէկ հաշիով կ'ապուած էին իրարու։ Պէրլըան անդ մը գրաւեց։ Քիչ ետքը իր քով եկաւ նստեցաւ մեծ գորաւոր մարդ մը, որ բարձր ձայնով երգուած երգերուն կ'առաջնորդէր։ Ուզեց տեղեկանալ թէ ո՞վ էր այդ մարդը եւ հասկցաւ թէ նոյն ինքն այդ տեղի թաղաւորը Լեւանիքան էր։ Ատենօք նշանաւոր մարդասպան մը, անգութ բռնակալ մը, արիւնոտրու զահակալ մը։— Այժմ, մարդ մը, որ իր ամբողջ ժողովուրդով Աւետարանին հնազանդած էր։

Ասիկա խոր ազդեցութիւն մը գործեց գիտունին վրայ, ուզեց այդ գորութեան զապտիքը հասկնալ, որով կրցած էր Քօլարտ այդ աստիճանին հասնիլ։

Եւ ահա,— Աստուծոյ խօսքին մէջ Պէրլըանի հանդիպեցաւ ցարուցեալ Յիսուսը. ասիկա իրականապէս հրաշալի եւ զարմանալի յայտնութիւն մըն էր։ Ասիկա պէտք էր Ափրիկէ իրթար, հոն իր Փրկիչը գտնուէր։

Հիմա ամէն կողմ կը շրջի, վկայելու այս հրաշալի յայտնութեան մասին, եւ միտքն մէկ փափաք ունի որ բոլոր միսիոնարութեան թշնամիները, որոնք յանդգնօրէն կը խօսին եւ կը գրեն Աւետարանին գէժ, եւ անհաւատները ու բոլոր քրիստոնէութիւնը ծաղրողները, իրենք ալ ասանկ միսիոնարական կայան մը զբիւրեն, հոն Կենդանի Աստուծոյ հանդիպելու եւ տեսնելու թէ ի՞նչ մեծ գորութիւն ունի խաչեալ եւ ցարուցեալ Քրիստոսի Աւետարանը։

Իսկ դու, սիրելի ընթերցող, անպայման պէտք չէ որ Ափրիկէի խորերը ճամբորդես քու Փրկիչը գտնելու համար. դուն կրնաս զայն գտնել քու իսկ տանդ մէջ, եթէ ուզես։ Աստուծոյ խօսքը կ'ըսէ, «Խօսքը քեզի մօտ է, քու բերնիդ մէջ եւ քու սրտիդ մէջ է. այսինքն հա-

ւատքին խօսքը, զոր մենք կը քարոզենք : Վասնդի եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս եւ քու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուց, պիտի փրկուիս : Ինչու որ սրտով կը հաւատայ մէկը արդարանալու, ու բերնով կը խոստովանի փրկուելու : (Հոովմ. Ժ. 8-10) :

Թրգմ. Ե. Տ.

Մ Ն Ն Դ Ա Տ Ո Մ Ա Ր Ս

Աստուծոյ հաճութեամբ, առկէ քսաներեք տարիներ առաջ, Փետրուար 6ին արեւի լոյսին բացի իմ աչքերս :

Աշխարհ գալու համար, ես ոչինչ չեմ յիշեր իմ կամքէս եւ հաճութենէս. պարզապէս շնորհք մ'էր ինծի հրաշակերտ մարմնի մը տիրանալով այս վիճակին ու միջավայրին կանչուիլս : Ասիկա տուի ես այն ատեն ընտանիքի մը ինծմով ուրախանալու որովհետեւ մանչ գաւակ մ'ըն էի : Այս դէպքը անմիջապէս արձանագրուեցաւ ընտանեկան յուշագիրքին մէջ, վասն ուրախութեան գալիք տարիներու նոյն թուականին. կառավարութեան մարզահամարի տոմարին մէջ հպատակութիւն յայտնելով Օսմանեան կայսրութեան անոր ծառայութեան մտնել յօժարելու առ որ պէտք ըլլայ : Անկէ ետք դէպքերը եւ պարագաները այնպէս բերին որ լայնածաւալ կայսրութիւնը քայքայուի եւ ես իմ հպատակութիւնս փոխեմ. պիտի գայ նաեւ օր մը որ այդ ծնունդը չեղոքանայ արեւի լոյսէն փակելով իմ աչքերս :

Կ'ուզեմ յետագայ տողերով զրել նաեւ իմ ծնունդս որ վերէն է ու Հոգիէն : «Բանբեր» իբր հոգեւոր ընտանիքի մը յուշագիրքը, թող արձանագրէ զայն ուրախութեան համար իր անգամներուն, որոնց թուին վրայ կ'աւելնամ եւ ես այսօր : Անշուշտ այս դէպքը իմացուելու է կառավարութեան արձանագրուելու համար հոն եւս : Հոգ չէ այդ կէտը, նոյն բույսին արդէն արձանագրուեցաւ Աստուծոյ թագաւորութեան. կենաց Գիրքին մէջ : Թէ ինչպիսի' ուրախութիւն եղաւ երկիրքի հրեշտակներուն մէջ, խօսուեցաւ ինծի նոյն պարագային : Յայտնած եմ իմ հպատակութիւնս հոն եւ յօժար' մտնելու ի'նչ ծառայութեան եւ ե'րբ որ կը կանչուիմ իբր թագաւորութեան մէջ : Ինչպէս վերեւ յիշուած ծնունդս առ ալ առանց իմ ջանքերուս կատարուած իրողութիւն մ'է, միայն պարզ հնազանդութեան մը արդիւնք. եւ այս անգամ շնորհուեցաւ ինծի յաւիտենական կեանք : Աստուծոյ զարմանալի կարգադրութեամբ հաճելի զուգահիշութիւնով մը վերէն ծննդեան օրս ալ Փետրուարի 6-ն է ներկայ տարուան :

Աստուծոյ մէկ գաւակը ըսած է՝ «Ան որ մէկ անգամ կը ծնի, երկու անգամ պիտի մեռնի. ան որ երկու անգամ կը ծնի՝ մէկ անգամ պիտի մեռնի» : Պատճառ եւ արդիւնքի օրինաւոր սահմանում մը ահա՝ : Բնական ծնունդին օրինաւորապէս կը յաջորդէ ուշ կամ կանուխ - բնական մահ, ու նաեւ երկրորդ մահ եթէ վերէն ու նորէն ծնած չէ այդ մէկը. բայց այս վերջինին պատճառաւ անոր վրայ «Իշխանութիւն չունի» երկրորդ մահը, հապա անիկա «Մահէն կեանքի փոխուած է» : Միայն այսպիսիներն են երանելիները : Ես ասոնցմէ եմ, Փա՛ռք Տէրոջս :

Մարտէյլ

ԼԵՒՈՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Մ Ա Ն Կ Ա Ն Ց Ս Ի Ի Ն Ա Կ

ՓՈԽԱԴԱՐՁ ՍԷՐ

Փոքրիկ աղջիկ մը իր պուպիկին հետ կը խաղար՝ մինչ մայրիկը զրելով կ'զբաղէր :

Քիչ վերջը մայրիկը փոքրիկը քովը կանչելով զայն զիրկը առաւ :

«Շատ, շատ ուրախ եմ որ. զիս կանչեցիր» ըսաւ փոքրիկը, «քեզ շատ կարօտցած էի ու կ'ուզէի մէյ մը սիրել» :

«Իրա՛ւ, հոգիս», ըսաւ մայրիկը, զայն դորովազին կուրծքին սեղմելով :

«Շատ ուրախ եմ որ իմ փոքրիկ աղջիկս զիս այսքան կը սիրէ, բայց արդեօք իմ զրելով զբաղած միջոցիս մինա՛կ կ'զգայիր. ինծի այնպէս կը թուէր թէ դուն եւ պուպիկդ շատ երջանիկ էիք միասին» :

«Երջանիկ էինք, մայրիկ, բայց ես պուպիկս սիրելէն ձանձրացայ» :

«Ինչո՛ւ համար» :

«Որովհետեւ երբոր ես զայն կը սիրեմ, ան սէրս չ'փոխարինիր» :

«Ուրեմն դուն զիս կը սիրես, որովհետեւ ես քեզ նորէն կը սիրեմ» :

«Քեզ սիրելուս մէկ պատճառը այդ է, մայրիկ, բայց ատիկա ամենէն առաջին ու ամենէն լաւ պատճառը չէ» :

«Հապա ի՞նչ է ամենէն առաջին ու ամենէն լաւ պատճառը» :

«Ձե՞ս գիտեր, մայրիկ», հարցուց փոքրիկը, մինչ ա՛նոր կապոյտ աչքերը կը փայլէին ու միեւնոյն ատեն պաղուլթիւն մը կը ցոլար անոնց մէջ :

«Ես քեզ շատ կը սիրեմ, որովհետեւ դուն զիս կը սիրէիր, երբոր ես տալուիս այնչափ պզտիկ էի որ չէի կրնար քեզ նորէն սիրել» :

«Մենք զԱնիկա կը սիրենք, ինչու որ առաջ Անիկա մեզ սիրեց» : Ա. Յովհ. Դ. 10 :

Թրգմ. Անգլերէնէ

ՔՐԻՍՏՈՍԱՆ ԻՍԹԻՖԱՏԷ ԷԹՄԷՔ

Ալլան Քրիստոսը ճիւղունին խելապը իշխան տրանսպա կէօնտէրտի : Անա իման էտէն հէր քիմսէ էպէտի հայաթա մալիք օլաճազ : Ալլան էօյլէ թառմիմ էթմիշ տիր քի օյլա մալիք օլան էպէտի հայաթա մալիք տիր : Յիսուս իման վասթաթաթլէ զալպիմիդտէ սաքին օլաճազ պիդ Անը իմանլէ գապուլ էթտիլիմիդտէ : Անա իման էթմէք՝ Յիսուսը քէֆարէթիմիդ, զուստիլէթիմիդ, կիւնահա զալիպ օլան գուվէթիմիդ հալընը քէնտի տիր տէյլա գապուլ էթմէք տիր :

Պէօյլէճէ Յիսուստան իսթիֆատէ էթմէք՝ Անը պու մանատա զալպիմիդէ գապուլ էտէքէք անը կէօնտէք տիր : Յիսուստան իսթիֆատէ էթմէք իշխան Յնա ինթիյան հիսս էտիլմէլի տիր : Էյէր Յ կիւնահաքարլարը խելապ էթմէք իշխան կէլտի վէ Անըն պաշլըճա իշի պու իսէ քի պիլա շիւպհէ պու տըր, էլգէմ շէյ ատէմին քէնտի կիւնահաքարլընը պիլմէսի տիր, պու օլաճաճա հիշ պիր քիմսէ Քրիստոստան Փաիտէլէնէմէզ : Պիր քիմսէ Անըն պալս էթտիլի Ֆիդիդի պէրէքէթլէրի կէօնտէպիլիք, լաքին Յիսուսըն շախսընտան նէպան էյլէյէն ախլապի վէ տիլընի գուվէթտէն իսթիֆատէ էտէմէզ : Ղուկ. 6. 19 :

Կիւնահաքար իտիլիինի անլալըպ գապուլ էթտիքտէն սօնրա ատէմ Յիսուսու իմանլէ Ալլան հըն Ք. Մ. վէրտիլի մանատա գապուլ էթմէլի տիր : Անը օլտուղը կիպի գապուլ էթմէլիլիլի : Անա ազլըմըպ կէօրէ թէֆսիլէր վէրէրէք գանընը գուվէթիլիէ ազլի պիր թաղըմ թալիմէլը վէ թէֆսիլէր սիվիշտիլիք իսէք հիմ պիլէ հէմտէ վազ էթտիլիմիդ քիմսէլէրէ պիր Փաիտէ էթմէյօր : Բէսուլ Գալատիա միւմիլէրինէ հազար իքէն «Էյէր խիթան օլունուր իսէնիդ Քրիստոս սիգէ պիր Փաիտէ էթմէք» տէյօր : Գաղ. 5. 2 : Անլէր խիթան օլունմաղլէ Յիսուսըն խելապ իշինէ հարտըմ էթմէք իսթէյօրլարտը : Իմանլէ Յիսուսը գապուլ էթմէք հալընը կէթմէզ, մութլազա քէնտիլէրտէ պիր շէյ հափմալըլար տէյու տիւշիւնիւյօրլարտը : Պու կիւն Կինէ պու թէհլիքէ էքսիք տէյիլ տիր : Նիշէ միւմիլէր ինայէթլէ խելապ պուլտուլտան սօնրա պիր ազ իլէրի կիտէրէք շէշիտ շէշիտ թալիմէլը չըգարարազ շէրիաթըն ամէլլէրինէ կէրի տէօնիլյօրլար զըմնէն : Անլէր Կաղ. 2, 3, 9, 10, 11 այէթլէրին գուվէթիլի կա անլամայօրլար հա ունուտուօրլար : Պու պէօյլէ օլտուղը կիպի պիր թաղըմլարմըգա Անըն քէֆարէթիլի կա գապուլ էտէմէյօրլըզ հաաա ազլի թալիմէլըլէ ինսանիլէշտիլմէք թէհլիքէսինտէ պուլունույօրուզ : Հագիդի միւմիլէրին իշի շայիլալէր կիպի «Անը պուլունուտուղու հալ իւզրէ գապուլ էթմէք» տիր : Մար. 4. 36 :

Պիր սէֆա պիր խաթթա տօքթօրա կէլտի : Տօքթօր մուայէնէ էթտիքտէն սօնրա անա իլաճ վէրտի վէ իլաճը նաալը գուլլանաճաղընը անա թարիֆ էթտի : խաթթա էվէ կէլիպ իլաճը թատընճա : մէմուլընտէն զիյատէ անը վէ թաթաղ պուլտու : Իլաճա պիր ազ սու վէ խօշ լաիհալը շէյլէր գարըշտըլըպ իշտի վէ հիշ պիր Փաիտէ կէօրմէմիշ օլարալ թէքրար տօքթօրա կիլթաի : Նիշէլէրին հալը պու խաթթանընքի կիպի տիր : Յիսուսըն նէֆսիմիդէ խօշ կէլտիլինէ կէօրէ գապուլ վէ վազ էթմէք խաթթաթընտա պուլունույօրուզ վէ Յիսուս պիգէ պիր Փաիտէ էթմէյօր :

Պու սաթըլարը օգուլան պիրատէր վէ հէմշիլէ, սէն Յիսուստան իսթիֆատէ էթմէլի էօյրէնմի՞շմիսին : Օ քէնտիլի սանա քէշֆ էթմի՞շմի տիր : Կիւնահալարընը աֆվ էթմի՞շմի տիր : Գալպտէքի կիզլի կիւնահալարա Անընլէ զալիպ օլաճալ էօյրէնմի՞շմիսին : Յիսուս կիւնահա ալէյհիլէ թէնտէ հիւքմ էյլէմիշ տիր, պու գուվէթիլի սէնիլ գալպիտէ նաֆըգըմ տըր : Անտէ մէսընը օլալըմըն : Քէտէլէրինի անա կէօթիլըտիլիւնտէ օ սանա լահաթ վէ թէհլիլի մէնպալըմ տըր :

Օ քէնտիլի պիգէ նէ՞ շէյլէր հալընտա հէր ան թաղտիմէտէր տիւշիւնմի՞շմիսին : Օ հայաթ էթմէլիմիդ տիր, Անա անըգըպ վէ Անը եւմէքլէ իսթիֆատէ էտէլիլի : Օ հայաթ սուլունուլ տըր, Անա սուլալըպ իշմէքլէ իսթիֆատէ էտէլիլի : Սու վէ էթմէք տընիմիդէ կիտէրէք ճէնտիմիդտէ մէզճ էալիտիլի կիպի Յիսուս անընիմիդտէ իմանլէ իմթիլաճ էթմէլի տիր : Օ մուալիմիմիդ տիր, Անը տիլլէրի տիպիտէ օթուլունուլ անը տիլլէմէքլէ, Օ նալունուլ տըր, գալպիմիդի հէր ան անա աշմաղլէ, Օ սալալըմը տըր Անա պիւրիւնմէքլէ, Օ պիլի սէվէն մուհապլէթ տիր Անա թէաշշուլ էթմէքլէ, Օ սամամը տըր հէր ան անտէ գալմաղլէ, Օ պաշըմը տըր Անա պաղլանմաղլէ իսթիֆատէ էտէլիլի : Օ պաղլը երլանըմը տըր Անա պաղարազ հէր տէլպիմիդէ շիֆա պուլունուլ :

Տիւնիա պալտուսուս իսթին քրիսթիան տիւնիա սօլ շէյլէրտէն իսթիֆատէ էթմէնին եօլունու պուլմուլար : Չէմինին մատէնլէրինտէն, սուլարըն գուվէթիլիտէն, քիւրէի հափատան, նէպաթաթտան վէ թապիաթըն պիր չօզ գուվէթլէրինտէն իսթիֆատէ էտէլիլէքէն, անըրըպ քի թապիաթըն խալիլի հաղընտա ճահիլ գալմըլար վէ չօղլար Յիսուս հաղը նտա մէքադ պիլէ էթմէքլէր : «Չիւնքի անլէրտէ Ալլանըն գուլէթի օլան Քրիստոսըն ճէլալի պէշէրէթիլիլի նուրու անլէրէ զիյա վէրմէմիսի իշիւն, պու տիւնիա իլահը իմանըլարըն պիհնիլի քէօր էթտի» : 2. Կորն. 4. 4 : Ղուկ. 24. 46 :

Հալէպ

ԱՆՆԱԶՆ ԹԵՊԵՍՍԻԻՄԻԻ

Պիր գաւառն գորգարագ քի փարլագ Յունիս կիւնէշի սալօսուսունս գիզըյմէթ մէֆրուշաթ վէ իփէկ խալըլարընը պողապիւրի, տըզգաթ իւէ փէնճէրէլէրի գափաթմըշ վէ խանէնին էն փարլագ վէ կիւզէլ օտաւընը դարանըզ վէ մազմուսմիլէթմէ թէրք չթմիշ խաի : Փէնճէրէլէրին պիւրիսի պիւր ազ աշըզ գալմըշ վէ պու ուֆադ հաւըզտան պէօյիւք դանի կիւնէշ միւզարէք փէրթէվէրինի սալօսունս իշէրիսինէ ազըտարագ թապանըն գիզըյմէթ խալըլարը իւզէրինէ աճաւիպ ալթունս պիւր շէրիտ աթմըշ խաի : Անըն քիւշիւք չօճուզը պու ալթունս կիւզի փարլայանս խազինէյի կէօրիւպ թահրիք օլարագ վալիտէսինէ զօշտու վէ չազըրար : «Ան վալիտէ պագ, պագ, օ նէ» տիր» :

Վալիտէսի սաքին պիւր սուրէթմէ «0 սալթ կիւնէշ գիյասը տըր չօճուզում» ճէվապ վէրտի : Պու քիւշիւք աւտէմ պէօյիւք հայրէթ իւէ գիզըյմէթ ալթունս շէրիտէ պագարագ թէքրար սիւալ էյլէտի, «Կիւնէշ գիյասը նէ» տիր վալիտէ :

Վալիտէ հիշ պիւր տիւշիւնկիւ հախօտ ճէհտ էթմէքտիզ սաքինսանէ «Կիւնէշ գիյասը Ալլահըն թէպէսսիւմիւ տիր» ճէվապ վէրտի :

Մէրգուսինս ճէվապընտա սոյքի իւհամ սէտասը վար տըր վէ կիւզէլ օլտուզու գաւառը տախի հազիպի տիր :

Պիր գաշ տաղիզէ ոսնրա քիւշիւք չօճուզ պէօյիւք սէվինճ իւէ նիտա էյլէտի «Պագ վալիտէ պագ պէն Ալլահըն թէպէսսիւմիւմիւտէ տուրուջօրում» : 0 փարլագ գըրմըզը պիւր գօտուրա կէյիւմիշ խաի վէ պիւրի պիւրինէ ողջըշ տըրըլմըշ այազարընը կիւնէշին փէրթէվէրի պուս էյլէյէրէք քիւշիւք գօնաուրալար ալէվ կիւզի փարլամագտա խաիլէր :

Վալիտէ պու տազիզէյի աւլա ունուլթմատը վէ օ քիւշիւք գօնաուրալար քէնաինէ ալթունսանս գիյասէ գըյմէթլի օլտուլար :

Սէնէլէր սիւրաթ իւէ իմրար էյլէտիլէր վէ օ քիւշիւք գըրմըզը գօնաուրալարը կիւնէ պիւր աւտէմ օլտու : Ալլահըն թէպէսսիւմիւմիւտէ հաշաւաճագ հէրտէ օ թամա վէ նէֆսիէրէսթլիլին մուղալլամ կէօլկէլէրինսանէ իմրարը էօմր էյլէտի : 0 պիւր սօղուզ, գամիւրսիզ մալիէրէսթ օլտու, տահա գիյասէ պէնկին օլմագ իշիւն ֆազիւրլէրի թէփէլէտի վէ գաիֆլէրի էյտի : Կիթտիքճէ գէնկիւլիլէրէք քէսպի գուվվէթ էյլէտի վէ ազամէթինի իլան էտէն պէօյիւք պիւր գօնագ հափտըրը : Բէնտինինս աօղմուշ խաիլի էվտէ պիւր չօղ էշհա ճէմ էտիլմիշ օլուպ պուսնլարընս պագըսը պիւր թարաֆա ալթըլաճագ վէ

պագըսընա իսէ հէնի մէսքէնտէ պիւր մահալ թախտիս էտիլէճէք խաի :

Էսկի խաիլէնինս հօգարը գաթընտան ուֆաճըզ պիւր սահաղը կէթիւրիլմիշ խաի վէ գէնկին աւտէմ աղգաթ իւէ պուսնու մուայէնէ էյլէտի : Անըն իշիւնտէն միւլթէվէֆա վալիտէսինին էլ հազըրը իւէ իւզէրինտէ շու քէլիմէլէր հազըլմիշ օլանս պիւր փաքէթ պուլտու, «Պու դայէթ գըյմէթլի տիր» :

Պու տիւնեալի պէօյիւք աւտէմ տիզգաթ իւէ պու քիւշիւք չըզընը չէօզտիւ : Անըն իշիւնտէ րէնկինի ալթմըշ գըրմըզը գայրշտան պիւր չիֆթ գօնաուրալար պուլտու : Տէրին տիւշիւնս կիւ իւէ պու չօճուզուզուզունս գիքրիլէթինէ պագտը : Գօնաուրալարըն պիւրինին թապանընս աւ հինէ վալիտէսինին էլ հազըսընը օգուտու «Պու քիւշիւք գօնաուրալար սէվկիւլիւ չօճուզումունս Ալլահըն թէպէսսիւմիւմիւտէ տուրաուզու կիւնտէ կիյալիլի գօնաուրալար տըրար : Անըն տախմա Ալլահըն թէպէսսիւմիւմիւտէ տուրմասը սէվկիւլիւ վալիտէսինին տուաւ տըր» :

Մէրգուս պու մուգատտէս վալիտէսինս գիքրի ճէմիլի, կիւզէլ էօմրիւ վէ միւպարէք քէլամլարը հազընտա տիւշիւնսիւմիւմիւտէ կէշմիշտէ նէ կիւզի պիւրի իտիլինի վէ շիմտի իսէ նէ հալտէ օլտուզուզունս աւլալարագ տէրհալ տիզի իւզէրինէ կէլտի վէ «Պու կիւնտէն իթիպարէնս պէնիմ տուամ տախմա Ալլահըն թէպէսսիւմիւ իշիւնտէ սաքին օլմագ իշիւն օլտուն» տէյէրէք Բապպա նիյագ էյլէտի :

Պիր աւտէմ քէնտի տօսթու իշիւնս պուսնտան տահա էյի պիւր շէյ աղու էտէմէզ : Պու սալթըրլարը օղույանս իշիւնս պիւրիմ արզու վէ թէմէնիմ պու տըր — տախմա Ալլահըն թէպէսսիւմիւմիւտէ հաշամագ սահա իհանս օլտունս :

Ինկիլիզճէտէն Խէրճ.

Ք.

ՅԱՆԿ ՆԻԻԹՈՑ

ՀԱՅԵՐԷՆ ՄԱՍ	ԷՂ
Աղօթքի ազդեցութիւնը	59
Ամենամեծ գիւտը	92
Անոր գաղափարը	43
Աստուած սէր է	55
Աստուծոյ կարեկցութիւնը	57
Աստուծոյ լեցուիլ	58
Աստուած աղօթքներու կը պատասխանէ	47
Արթնութիւն մը երբ կըրնանք ահնկալել	9
Գողգոթան	5
Դիտողութիւնք հաւատացեալներու համար	64
Եթէ Գրիգորոս յարութիւն առած չէ	4

Երրորդութիւն	36
Երբ Յիսուս կ'անցնի	51
Երկնային Գահուն առաջնորդող ճամբան	63
Իրենց սրտերուն մէջ զղջացին	26
Ինչպէս որ արծաթը կը փորձուի	49
Ծննդատոմարս	93
Կենաց ծառը	7
Կենդանի զոհ	41
Կրօնքներու տարբերութիւնը	54
Հաւատքը որ սիրով ի գործ կը դրուի	89
Հաւատացեալն ու անհաւատը	36
Հովանիւ ծաղիկները	67
Հրէաներուն ալ Փրկիչը ծնաւ	74
Հրաւեր մը բեռնաւորեալ հոգիներու	87
Մեղքը եւ մեղքին ազդեցութիւնը	4
Մխիթարուն մխիթարելու համար	10
Մայրիկին Աստուածաշունչը	13
Մենակեացի մը պատգամը	33
Մեղաւորին պարտականութիւնը	58
Մարդը որ ինծի համար մեռաւ	82
Յիսուսէն սորվէ	19
Յարուցեալ Քրիստոսի տիեզերականութիւնը	35
Նեղուած սրտին դարմանը	25
Ո՞վ զրկեմ եւ մեզի համար ո՞վ երթայ	34
Զձանձրանալ	71
Սատու Սունտար Սինկհ	11
Սարեփիթա	23
Սուրբ Դրքիս հետ	35
Սուրբ Ծննդեան խորհրդածութիւններ	73
Վկայութիւնս	13
Տառն եւ հինգ հազար (15000)	71
Տէրոջ պահանջած արթնութիւնը	17
Տուր ինձ Տէր	45
Տէրոջ օրհնութիւնը	81
Փորձաքար մը հաւատացեալներու համար	27
Փրկութեան հմր. մարդոց կերպը, Ածյ. կերպը	84
Քրիստոսի դպրոցին մէջ	14
Օժանդակի մը 12 պատուիրանները	22

* * *

ԹՈՒՐԲԵՐԷՆ ՄԱՍ

Աչքդ մէքթուպ	36
Ալլահա մէրպուլիյէթ	46
Ալլահըն թէպէսսիւմիւ	95
Աչքդ մէքթուպ	45
Ալլահա քուսսանքը ճան	68
Աչքդ մէքթուպ	69
Անաթթափուս Բիրխըր	86
Եարտըմը մուզայադատան տահա պէօյիւք տիր	78

Թէաճիւպ էտէլիմ մի՞	19
Թէճըրիւպէտէ ղալէպէ եօլու	20
Թէպէտաիւլ էթմէյէն	76
Իշիտիմէյէն տուալար	14
Խէլասըմըն շէհատէթի	85
Կիրիլէճէք մէլճա զայասը	37
Հիշ սէնին իսմինտէ օլ պէօյիւք Բիթապա եազըլտը՞ մը	53
Մատըրնիզմ	52
Միւսինին Յիսուստա էմնիյէթի հալը	68
Յիսուսա պապ	5
Պու կիւն վէ եարըն արասընտա	29
Վալիտէյնէ տուա էթմէք իշիւն թափսիյէլէր	70
Տուայա մանիլէր	5
Տար եօլտա	61
Բուհանի զօրազլըզ	21
Բուհանի մէշգ	30
Բուհանի կէրմի	60
Բիթապը Մուզատաէս	13
Բեաթիլ իման	38
Օն սէնէտէն պէրրու Սէմատա	13
Օլ կիւն	86

* * *

ՄԱՆԿԱՆՑ ՍԻՒՆԱԿ

Աստուած կը տեսնէ	55
Եւ զանոնք պզտիկ տղայ մը պիտի առաջնորդէ	31
Ինչո՞ւ աւագ ուրբաթ օրը	47
Խեղճ փոքրիկ Հիլտա	84
Ծնունդ է այսօր	79
Հնազանդեցէք առանց «ի՞նչու» ի	38
Ճիշդ ատոր համար	70
Յիսուսը փնտռել	70
Յովհաննէս Երեք տասնը վեց	62
Չար ընկերակցութիւններ	39
Պզտիկ տկար բայց հաւատարիմ	39
Փոխադարձ սէր	93

* * *

ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

ԿԱՐԵՒՈՐ ԶԵԿՈՒՅՈՒՄՆԵՐ	32, 80, 88
ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ	15, 24, 32, 39, 48, 55, 72, 79, 87
ՑԱՆԿ	95

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպար. Ա. Երեցեան, 40, Րիւ տէ Տօմինիքէն - Մարտէյ